

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Zwei Vorträge über die historische und kulturelle Bedeutung des armenischen Volkes, von Freiherrn M. Kapri.

Վիեննայի հայասիրական կոմիտեի յառաջարանով, պատրիարքարանի յուշագրի ու ժողովրդի վիճակագրութեան յաւելուածներով եւ Հայաստանի աշխարհագրական քարտէզով, Վիեննա, 1945 թ.

Վիեննայի նորաստեղծ հայասիրական կոմիտեի հրատարակութիւնն են այս զոյգ դասախօսութիւնները, Հեղինակն է հայազգի բարոն (Freiherr) Կապրի, որ, ինչպէս այդ շնչառած է կոմիտեի քարտուղարի յառաջարանով, խնդրին մօտեցել է ոչ թէ ազգային, այլ զուտ մարդկային տեսակէտից: Դասախօսութիւններից մէկը կարդացուած է անցեալ տարուայ մայիսի 24-ին, իսկ միւսը՝ յուլիսի 6-ին:

Առաջինի մէջ դասախօսը մի համառօտ ակնարկ է ձգում հայոց պատմութեան վրայ, խոշոր գծերով նկարագրելով չորս հարստութիւնները, թուրք-թաթարական շրջանը, և 19-րդ դարում հայոց մի մեծ հասուածի ազատագրումը թուրք-պարսկական լծից ռուսների ձեռքով: Երանից յետոյ նա անցնում է Հայկական հարցի պատմութեան, յիշատակում Ս. Ստեփանօ-ի ու Բերլինի դաշնագրերը, նրկար կանգ առնելով Արդիւ Համիդի կառավարութեան ու 1895 թ.-ի դէպքերի վրայ, վերլուծելով թուրքական քաղաքականութիւնը և ի հաստատումն իր ասածների մէջ ընդ մէջ բերելով Ասիական թիւրքիայի անգլիական հիւպատոսների իրենց պետութեան ներկայացրած ղեկուցումներից ու եւրոպական մինիստրների ճառերից վկայութիւններ: Անցնելով 1908 թ.ի յեղափոխութիւնից յետոյ կատարուած իրողութիւններին՝ Ադանայի ջարդը և վերջին Բալկանեան պատերազմի առիթով ծագած խրտումներն ու իրերի խռովայոյց վիճակը Հայկական նահանգներում, հեղինակը հետեւեալ խօսքերով է փակում իր առաջին դասախօսութիւնը. «Ինչ պիտի լինի հայաւ այս ժողովուրդը: Պէտք է ոչնչանայ նա, երբ աւելի քան 3000 տարի քաջապէս պահպանել է իր գոյութիւնը: Այն, որ խաւար միջնադարում անկարելի եղաւ, զարգացած կուտուրայի մի այնպիսի ժամանակում, որպէսին մերն է, պէտք է

անպատիժ կերպով տեղի ունենայ,— Եւ այդ տեղի կ'ունենայ, եթէ կուլտուրական երկրների լայն հասարակութիւնը իրաւունքի և մարդկայնութեան կող չլարձրացնէ մի դժբաղդ ժողովրդի համար, որ զողահար վերջին յուսով նայում է Եւրոպային ու նրանից օգնութիւն աղերսում:

Երկրորդ դասախօսութիւնն աւելի ընդարձակ է և նորութեան տեսակէտից աւելի կարևոր: Այստեղ Բարոն Կապրի սկզբում բաւական երկար քննութեան է առնում այն մեղադրանքները — յերիւրանքները, որ բարդում են հայերի վրայ թիւրք կառավարութիւնն ու նրա եւրոպացի quasi-բարեկամները, և իր վրայ վերցնում այդ հերքելու պատուաւոր դերը, ապա անցնում է Բալկանեան ժողովուրդների 19-րդ դարում թիւրքական լծից ազատագրուելուն և այնուհետև վերլուծում համիդեան հայաջինջ քաղաքականութիւնը:

Եւրոպայում այժմ իրենց հայատեցութեամբ — թիւրքասիրութեամբ յայտնի են երկու նշանաւոր ֆրանսիացի գրողներ՝ Pierre Loti և Claude Farrère: Աջ ու ձախ գովասանքներ չալլելով իրենց սիրեցեալ թիւրքերին, որպէս Herrenvolk-ի, նրանք թունաւոր ատելութեամբ են լցուած դէպի հայր, որ իբր, Թիւրքիայի կրած բոլոր դժբաղդութիւնների պատճառն է: Այս մակդիրները, որոնցով Լոտին այնքան սիրով օժտում է հայերին, կարող են և մտայածին չլինել: Շատ կարելի է Լոտին սուլթանների մայրաքաղաքում հանդիպել է այնպիսի հայերի, որոնք անշուշտ հայութեան տականքն են կազմում, նրա այլասեռուած անդամները: Բայց կարելի է՝ այդպիսի պատահական ծանօթութեան վրայ դատաւճիռ կարդալ մի դժբաղդ ժողովրդի մասին, որի դատը եւրոպական հասարակութեան անաչառ կարծիքի առաջ է դրուած: Արևելքը, հայերին ուսումնասիրող այնպիսի հռչակաւոր արևմտեան գիտնականներ ու հասարակական գործիչներ, որպիսին են Rohrbach, Lehmann Haupt, Lepsius, Gladstone, Bryce, ևլն, միաբերան վկայում են, որ հայը մի շատ ազնիւ, աշխատասէր ու կուլտուրական ժողովուրդ է, որի ճնշող մեծամասնութիւնը ոչ թէ ըստ Լոտիների խաբեայ վախառուներ են, այլ խեղճ ու կրակ, իր ճակատի քրտինքով հաց վատտակող երկրագործ գիւղացիներ: Աշխատասիրութիւն — ահա այն գիծը, որ անմիջօրէն երևան է գալիս իւրաքանչիւր հայի մէջ: Շնորհիւ իւր ժրաջանութեան և ընծաին ունակութեան նա քաղաքներում և առհասարակ ամեն տեղ քիչ թէ շատ բարեյաջող պայմաններում բարեկեցիկ դրութիւն է ձեռք բերում, իսկ թիւրքը՝ ծոյլ, դանդաղկոտ, անտոխապաշտ — անտեսապէս յետ է մնում: Եւ ահա այս հակադրութիւնը ի նկատի ունենալով վերջիններիս եւրոպացի բարեկամները մի բերան գոռում — կոչում են՝ հայն արևելքի հրէան է, վախառու, կեղեքիչ, իսկ թիւրքը խեղճ, կեղեքւող (!!!):

Մի ուրիշ մեղադրանք, որ նոյնպէս անդադար հռչակում են Լոտին և նման մտածողներ, դա իբր հայերի երկչոտութիւնն է (Feigheit): Լոտին իր «Մեննող Թիւրքիան» աշխատութեան մէջ շատ իրաւացի է համարում Թիւրքական այն առածը, թէ՛ Allah hat den Hasen und den Armenier nach demselben Muster geschaffen (Ալլահ նապաստակին և հային նոյն կաղապարով է ստեղծել), և դարմանում է թէ ինչու վերջին պատերազմի ժամանակ Թիւրքերն իրենց յաղթական բանակն ընդունեցին երկչոտ հայերին, որոնք և նրանց պարտութեան պատճառը դարձան: Սակայն այս անհիմն մեղադրանքը հերքում է հենց ինքը Լոտին, գրքի վերջում խոստովանելով թէ՛ իր Թուրք բարեկամ սպաներից շատերն իրեն յայտնել են, որ հայերը մեծ քաջութիւն են ցոյց տուել ներկայ պատերազմում: Աւելին հենց այս պաշտօնական վկայութիւնը ցրում է հայերի երկչոտութեան լեգենդան և պարզ ցուցադրում, որ հայերը, որպէս իսկական հնդեգերմաններ, գիտեն սուրը ձեռքին պաշտպանել իրենց ընդհանուր հայրենիքը, մի հայրենիք, որ այնքան դժբաղդ է եղել նրանց համար—Իբրև հայերի երկչոտութեան ապացոյց մատնանիչ են անում սովորաբար 1895 թուի ջարդերը: Սակայն այդ անողներն անձանթ են իրերի գրութեան. նրանք մոռանում են, որ հայերն անդէն էին մի հսկայ պետութեան կանոնաւոր զօրքերի առաջ, զինուած վերջին տեսակի ամենայն պատրաստութեամբ—ինչու հապա մի բուռն գէյթունցիները դիմադրեցին 60,000 կանոնաւոր զօրքերի և վերջն էլ անընկճելի մնացին:

Այս երկու հերքումները Բարոն Կապրիի դասախօսութիւններից մենք բերինք որպէս նմուշ, ցոյց տալու թէ որքան լուրջ և անաչառ կերպով է մօտեցել խնդրին յարգելի հեղինակը: Առհասարակ նա աշխատում է ամեն ինչ պարզ, պատճառաբանալ կերպով դնել Եւրոպայի հասարակական կարծիքի առաջ, հազորդել նրան ճշտորոշը, նպաստել՝ որ նա ստոյգ զաղափար կազմէ այնտեղ հեռուոր արեւելքում տիրող իրերի անմխիթար վիճակի մասին*). Եւ այդ այն պատճառով, որ Բարոն Կապրի հաւատացած է, թէ եւրոպական պետութիւնների անաչառ հասարակական կարծիքն է,—և ոչ նրանց չահագէտ դիւանագիտութիւնը,—որ պիտի հնչեցնէ իր հուժկու ձայնը և վերջ տայ տառապանքներին մի ազգութեան, որ

*) Նոյն նպատակն է հետապնդում եւ Վիեննայի հայասիրական կոմիտէն: Գրքոյի յառաջաբանում կոմիտէի քարտուղարը գրում է. «Վիեննայի հայասիրական Կոմիտէն առանձնապէս ուրախ է այս դասախօսութիւնները հրատարակելով եւ յոյս ունի այս եղանակով զէթ որոշ չափով Աւստրո-Հունգարիայում Հայկական հարցի մասին եղած հասարակական կարծիքի պարզութիւնը նպաստելու»:


մարտիրոսագրուել է դարեր շարունակ իւր այն մեղքի համար, որ եղել է քրիստոնեայ և լուսաւորութեան—կուլտուրայի դրօշակակիրը խաւար արեկեղում:

Գրքոյկի ընթերցանութիւնը թողնում է վերին աստիճանի հաճելի տպաւորութիւն: Այդ տպաւորութիւնն աւելի ևս ուժեղացնում են դասախօսութիւններին կցուած ընդարձակ վիճակագրական թերթերն ու Հայաստանի աշխարհագրական քարտէզը գրքոյկի հաճելի արտաքինն հետ միասին (շապիկը նկարազարդուած է ս. էջ միածնի վանքի և երկու Մասիսների տեսարանով): Մեր երիտասարդ աղջկոցի (Conationaler) կրակոտ եռանդն ու մեծ ձեռնհասութիւնը ըստ ամենայնի գովելի է: Մնում է ցանկալ ներկայ գրքոյքին լայն տարածումն եւրոպական հասարակութեան մէջ ու իրագործումն այն նպատակի, որ ունեցել է հեղինակն այս դասախօսութիւնները կարդալիս:

Վաղ. Տէր. Յակովբեան

1914 թ. յուլիս 5

Ա. Էջմիածին



«Մարգարիտներ Հայ Բանահիւսութեան», Ա. Է. Բ. զիրք. 1914 թ.

Թիֆլիս—Վաղարշապատ:

«Մարգարիտներ Հայ Բանահիւսութեան» խորագրի տակ Աղագորական ընկերութիւնը սկսել է հրատարակել Հայ Բանահիւսութեան նպատառը հում նիւթերի ժողովածուներ, առայժմ լայն ընծայելով երկու ստուար հատորներ: Հրատարակութեան ծախսն իր վրայ է վերցրել տիկին Հայկանուշ Մարտիրոսեանը, ձօնելով բոլոր հատորներին էլ իւր վաղաթառամ դատեր՝ Մարգարիտի յիշատակին, որի անւամբ և ժողովածուները կրում են «Մարգարիտներ» խորագիրը: Տիկնոջ այդ բայը ըստ ամենայնի գովելի ու յանձնարարելի է: Զօնը երկակի բնոյթ է կրում. մի կողմից պատուական նուէր հանդուցելի յիշատակին, միւս կողմից անգնահատելի աջակցութիւն հայագիտութեան ընդհանրապէս և հայ Բանահիւսութեան մասնաւորապէս:

Ներկայ դոյզ հրատարակութիւնների բովանդակութիւնը ընդ-